

## «Գրաբուս-գրախանութ»-2017

2017 թվականի հուլիսի 12-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները Շրջիկ գրադարանով «Գրաբուս-գրախանութ» ծրագրի շրջանակներում այցելեցին Արագածոտնի մարզ: Շնորհիվ Արագածոտնի մարզային գրադարանի, «Գրաբուս-գրախանութ»-ի այցի մասին տեղեկացված էին նաև համայնքային գրադարանների աշխատակիցները և ընթերցողները, ովքեր ծանոթացան Գրաբուս-գրախանութի ցուցահանդես-վաճառքին ներկայացված նոր հրատարակություններին: Ներկայացված գրականությունից հատկապես հետաքրքրություն էին առաջացնում մանկական, գիտահանրամատչելի, թարգմանական, պատմական և դասական գրականությունը: